ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE6D-D0F6-4D06-88F2 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/6908/02/26 քաղ. Երևան
19 Հունիսի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ՏԵՔՍՈՒՐՈԼԴ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի կողմից «ՏԵՔՍՈՒՐՈԼԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ 2026 թվականի հունիսի 08-ին ընդունված՝ «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» որոշումն ընդունման պահից անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 15.06.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետ նաև՝ Համակարգ) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի կողմից «ՏԵՔՍՈՒՐՈԼԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ 2026 թվականի հունիսի 08-ին ընդունված՝

«գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» որոշումն ընդունման պահից անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Ներկայացված հայցադիմումը 15.06.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 16.06.2026 թվականին:
I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից պահանջել ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/1 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ՏԵՔՍՈՒՐՈԼԴ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի կողմից «ՏԵՔՍՈՒՐՈԼԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ 2026 թվականի հունիսի 08-ին ընդունված՝ «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» որոշումն ընդունման պահից անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից պահանջել ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/1 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,
4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի հուլիսի 31-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող՝ «ՏԵՔՍՈՒՐՈԼԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ 2026 թվականի հունիսի 08-ին ընդունված՝ «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» որոշման հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև որոշման կատարման՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Միևնույն ժամանակ պարզաբանել, որ վիճարկվող որոշման իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող են ներկայացվել միայն ապացույցները պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողը հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:
6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի

պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am